**ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ, ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ, ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՑՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ**
**ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ**
**N «ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-25/134»**

ք. Աբովյան «02» դեկտեմբերի 2025թ.

Աբովյանի համայնքապետարանը, ի դեմս համայնքի ղեկավար Է. Բաբայանի, որը գործում է համայնքապետարանի կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, և «Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն, ի դեմս տնօրեն Ա. Ասրյանի, որը գործում է ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կապալառու), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

## 1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Կապալառուն պարտավորվում է սույն պայմանագրով սահմանված կարգով, նախատեսված ծավալներով, ձևով և ժամկետներում կատարել սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) N 1 Հավելվածով սահմանված նախագծային փաստաթղթերով, ներառյալ դրանցով նախատեսված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը) և ծավալաթերթ-նախահաշվով նախատեսված ***Աբովյան համայնքի կարիքների համար Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Սարալանջի, Երիտասարդական, Շինարարների, Պիոներական փողոցների լուսավորության համակարգի կառուցման աշխատանքները*** (այսուհետ՝ աշխատանք), իսկ Պատվիրատուն պարտավորվում է ընդունել կատարված աշխատանքը և վարձատրել դրա համար: Սույն պայմանագրի անբաժանելի մաս է հանդիսանում **ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-25/134** ծածկագրով գնման ընթացակարգին մասնակցելու շրջանակում Կապալառուի կողմից հայտով ներկայացված՝ նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման (օգտագործման) պարտավորության մասին հավաստումը:

1.2 Պայմանագրով նախատեսված աշխատանքները Կապալառուն կատարում է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերին, ինչպես նաև սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող աշխատանքի ծավալաթերթ-նախահաշվին համապատասխան:

1.3 Պայմանագրով նախատեսված աշխատանքները սկսվում են պայմանագիրն ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ ՝ համաձայն հավելված 2-ի:

Պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները սահմանված են սույն պայմանագրի հավելված 2-ում ներկայացված օրացուցային գրաֆիկով:

## 2. ԿԱՊԱԼԱՌՈՒԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԿԱՏԱՐԵԼԸ

2.1 Աշխատանքը կատարվում է Կապալառուի աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, շինարարական նյութերով և միջոցներով:

2.2 Կապալառուն պատասխանատվություն է կրում իր տրամադրած նյութերի և սարքավորումների որակի համար:

## 3. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

### 3.1. Պատվիրատուն իրավունք ունի՝

3.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կապալառուի իրականացրած աշխատանքի ընթացքը և որակը՝ առանց միջամտելու վերջինիս գործունեությանը.

3.1.2 Կապալառուի կողմից պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետի (ներառյալ օրացուցային գրաֆիկի) խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել աշխատանքի կատարման նոր ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.1.3 Չընդունել աշխատանքի արդյունքը՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված դրույթներին, պայմանագրի 1.2 կետով նախատեսված պահանջներին չհամապատասխանելու դեպքում՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ և պահանջել Կապալառուից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը, ինչպես նաև 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.1.4 Միակողմանի լուծել պայմանագիրը և պահանջել հատուցելու իրեն պատճառված վնասները, եթե.

ա) Կապալառուն ժամանակին չի սկսում աշխատանքի կատարումը կամ աշխատանքը կատարում է այնքան դանդաղ, որ դրա ժամանակին ավարտը դառնում է ակնհայտ անհնար,

բ) Կապալառուն խախտել է պայմանագրի 1.3 կետում նախատեսված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը),

գ) Կապալառուի կողմից կատարված աշխատանքը չի համապատասխանում սույն պայմանագրի 1.1 կամ 1.2 կետով սահմանված պահանջներին,

դ) Կապալառուի կողմից խախտվել են պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով աշխատանքի թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետները.

3.1.5 Աշխատանքի արդյունքի թերությունների հետ կապված պահանջներ ներկայացնել երաշխիքային ժամկետում:

3.1.6 Լիազորել այլ անձի՝ աշխատանքի իրականացման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնելու նպատակով.

3.1.7 Մինչև Պատվիրատուի կողմից Կապալառուի կատարած աշխատանքի արդյունքն ընդունելը, պահանջել իրեն հանձնելու անավարտ աշխատանքի արդյունքը՝ պայմանագիրն օրենքով կամ պայմանագրով նախատեսված հիմքերով դադարեցնելու դեպքում:

**3.2. Պատվիրատուն պարտավոր է՝**

3.2.1 Աշխատանքը կատարելիս՝ աջակցել Կապալառուին պայմանագրով նախատեսված դեպքերում, ծավալով և կարգով.

3.2.2 Պայմանագրով նախատեսված ժամկետում և կարգով Կապալառուի մասնակցությամբ զննել և ընդունել կատարված աշխատանքը (դրա արդյունքը), իսկ պայմանագրից աշխատանքի արդյունքը վատթարացնող շեղումներ կամ աշխատանքում այլ թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ հայտնել Կապալառուին.

3.2.3 Պայմանագրի ուժի մեջ մտնելու պահից 5 աշխատանքային օրվա ընթացքում Կապալառուին տրամադրել աշխատանքի իրականացման համար համապատասխան տարածք.

3.2.4 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքն ընդունելու դեպքում Կապալառուին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները.

3.2.5 Պայմանագրի 3.4.3 կետի 2-րդ ենթակետով նախատեսված գրավոր համաձայնությունը Կապալառուին տրամադրել տաս օրվա ընթացքում: Եթե սույն կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն Կապալատուին չի տրամադրում գրավոր համաձայնությունը (անհամաձայնությունը), ապա համաձայնությունը Կապալառուի կողմից համարվում է ստացված: Համաձայնությունների ստացման ընթացակարգը կողմերը կարող են իրականացնել նաև էլեկտրոնային փոստի հասցեներին տեղեկատվության փոխանակման միջոցով: Այս դեպքում կողմերը նախապես գրավոր եղանակով փոխանակում են այն էլեկտրոնային փոստերի հասցեները, որոնց պետք է ուղարկվեն տեղեկությունները: Սույն կետով նախատեսված փաստաթղթերը հանդիսանում են կատարողական ակտերի անբաժանելի մասը:

**3.3. Կապալառուն իրավունք ունի՝**

3.3.1 Պայմանագրի 1.3 կետով նախատեսված ժամկետում աշխատանքի արդյունքը հանձնելու դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու պայմանագրի 5.1 կետով նախատեսված՝ վճարման ենթակա գումարը:

3.3.2 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.4 կետում նշված ժամկետների խախտման դեպքում Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները և պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

**3.4. Կապալառուն պարտավոր է՝**

3.4.1 Աշխատանքների առնվազն ----- տոկոսը կատարել անձամբ, պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում, իր աշխատանքային և տեխնիկական ռեսուրսով, ինչպես նաև անհրաժեշտ շինարարական նյութերով, միջոցներով ու պատշաճ որակով՝ նախագծին և ծավալաթերթին համապատասխան:

3.4.2 Կատարել աշխատանքի վերաբերյալ Պատվիրատուի տված ցուցումները, եթե դրանք չեն հակասում պայմանագրի պայմաններին:

3.4.3 Ապահովել՝

1) շինմոնտաժային աշխատանքների կատարումը քաղաքաշինական նորմատիվատեխնիկական փաստաթղթերի և սույն պայմանագրի պայմաններին համապատասխան, կատարել իր կողմից մոնտաժված ինժեներական հաղորդակցուղիների համակարգերի (էլեկտրամատակարարման, ջեռուցման, ջրամատակարարման, կոյուղու, օդափոխությանև այլն) անհատական փորձարկում, մասնակցել սարքավորման համալիր փորձարկմանը.

2) նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրումը (օգտագործումը)՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

3.4.4 Աշխատանքի արդյունքը Պատվիրատուին հանձնելիս նրան հայտնել այն պահանջների և կանոնների մասին, որոնց պահպանումն անհրաժեշտ է աշխատանքի արդյունքի արդյունավետ և անվտանգ օգտագործման (շահագործման) համար, ինչպես նաև տեղեկություններ հաղորդել այդ պահանջները և կանոնները չպահպանելու հնարավոր հետևանքների մասին:

3.4.5 Պայմանագրի 1.3 կետում նշված ժամկետը (ներառյալ օրացուցային գրաֆիկը) խախտելու և Պատվիրատուի կողմից աշխատանքի կատարման նոր ժամկետ սահմանվելու դեպքում, ապահովել աշխատանքի կատարումը սահմանված ժամկետում և յուրաքանչյուր ուշացված օրվա համար վճարել պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

3.4.6 Պայմանագրի 3.1.4 կետով նախատեսված հիմքերով պայմանագրի լուծման դեպքում հատուցել Պատվիրատուին պատճառված վնասները և վճարել 6.3 կետով նախատեսված տուգանքը:

3.4.7 Շինարարության օբյեկտի կոնսերվացման անհրաժեշտության ծագման դեպքում՝ իր միջոցներով կատարել աշխատանքը դադարեցնելու և շինարարությունը կոնսերվացնելու անհրաժեշտությունից բխող ողջամիտ ծախսերը:

3.4.8 Եթե շինարարական ծրագրերի կատարման արդյունքի կամ դրա առանձին բաղադրիչի համար սահմանված երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:

3.4.9 **Պայմանագրով երաշխիքային ժամկետ է սահմանվում Պատվիրատուի կողմից ողջ ծավալով Աշխատանքն ընդունվելու օրվան հաջորդող օրվանից հաշված մեկ տարի: Եթե երաշխիքային ժամկետի ընթացքում ի հայտ են եկել կատարված Աշխատանքի թերություններ, ապա Կապալառուն պարտավոր է իր միջոցների հաշվին, Պատվիրատուի կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել թերությունները:**

3.4.10 Կապալի օբյեկտի, դրա առանձին մասերի (կոնստրուկցիաներ և այլն) և օգտագործվելիք նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեխնիկական բնութագրերին և երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են պայմանագրի N 1.1 Հավելվածում:

3.4.11 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

## 4. ԱՇԽԱՏԱՆՔԻ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

4.1 Կատարված աշխատանքը ընդունվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կապալառուի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Ընդ որում սույն պայմանագրի շրջանակներում կատարված և Պատվիրատուին ներկայացված աշխատանքի արդյունքի ընդունումն իրականացվում է, եթե Կապալառուն ամբողջությամբ՝ ամենօրյա ռեժիմով ապահովել է քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջները, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպումը, կահավորումը, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումները) նորմերը՝ որի վերաբերյալ առկա է շինարարական աշխատանքների կատարման նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնող՝ Պատվիրատուի հետ պայմանագիր կնքած կազմակերպության գրավոր հավաստումը:

Մինչև պայմանագրով աշխատանքի կատարման համար նախատեսված օրը ներառյալ Կապալառուն Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ աշխատանքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 4.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 4): Ընդ որում Կապալառուն հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

4.2 Եթե կատարված աշխատանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 4.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված տաս աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

4.3 Եթե կատարված աշխատանքը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կապալառուին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած

բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կապալառուի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

4.4 Եթե պայմանագրի 4.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում կատարված աշխատանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա կատարված աշխատանքը համարվում է ընդունված և պայմանագրի 4.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կապալառուին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4.5 Աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների արդյունքները նախագծանախահաշվային փաստաթղթերին չհամապատասխանելու դեպքում կողմերը կազմում են երկկողմ ակտ՝ թվարկելով թերությունների վերացման համար պահանջվող՝ կատարման ենթակա լրացուցիչ աշխատանքները և ժամկետները: Կապալառուն պարտավոր է պայմանագրային գնի սահմաններում, առանց լրացուցիչ վճարի, կատարել անհրաժեշտ աշխատանքներ:

4.6 Աշխատանքն ընդունելիս կիրառվում են նաև հետևյալ պայմանները՝

1) Կապալառուի կողմից շինարարության ավարտի մասին տեղեկություն ստանալուց հետո Պատվիրատուի ղեկավարը ձեռնարկում է միջոցներ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված ավարտված շինարարությունն ընդունող հանձնաժողով (այսուհետ՝ ընդունող Հանձնաժողով) ձևավորելու և կատարված աշխատանքներն ընդունելու համար.

2) պայմանագրի կատարման արդյունքը համարվում է ամբողջությամբ ընդունված պետական կառավարման մարմնի ղեկավարի՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 19-ի N 596-Ն որոշմամբ սահմանված կարգով ձևավորված հանձնաժողովի կողմից կատարված աշխատանքներն ընդունվելու դեպքում.

3) մինչև ավարտված շինարարական օբյեկտի ընդունումը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի մարտի 9-ի N 596-Ն որոշման համապատասխան ստեղծված հանձնաժողովը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով փաստագրում է ավարտված շինարարության օբյեկտը և կազմում օբյեկտը շահագործման ընդունող հանձնաժողովի ակտ.

4) սույն կետի 3-րդ ենթակետում նշված ակտը սահմանված կարգով ստանալուց հետո պատասխանատու ստորաբաժանումն ստուգում է ավարտված շինարարական օբյեկտի (կատարված աշխատանքների) համապատասխանությունը պայմանագրի պահանջներին և, եթե կատարված աշխատանքը՝

ա. համապատասխանում է պայմանագրի պայմաններին, ապա ստորագրվում է պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրություն,

բ. չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա արձանագրություն չի ստորագրվում.

5) մինչև սույն կետով նախատեսված պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու մասին հանձնման-ընդունման ավարտական արձանագրությունն ստորագրելը՝ Պատվիրատուն չի վճարում կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսը, իսկ տարաժամկետ վճարելու դեպքում՝ վերջին վճարման գումարը, որը չի կարող պակաս լինել կապիտալ շինարարության համար կատարված աշխատանքների ընդհանուր գումարի հինգ տոկոսից:

## 5. ԱՇԽԱՏԱՆՔԻ ԳԻՆԸ ԵՎ ՎԱՐՁԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Սույն պայմանագրի ընդհանուր գինը կազմում է **121 095 000.0** (մեկ հարյուր քսանմեկ միլիոն իննսունհինգ հազար) ՀՀ դրամ, որից **20 182 500.0** (քսան միլիոն հարյուր ութսուներկու հազար հինգ հարյուր) ՀՀ դրամը՝ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կապալառուի կողմից իրականացվող բոլոր ծախսերը:

5.2 Աշխատանքի գինը կայուն է և Կապալառուն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

5.3 Պատվիրատուն վճարում է աշխատանքի կամ պայմանագրի օրացուցային գրաֆիկով նախատեսված՝ առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների՝ պայմանագրի 4-րդ բաժնով նախատեսված կարգով ընդունելու դեպքում Հայաստանի Հանրապետության դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կապալառուի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված ամիսներին, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 30-ը:

Ընդ որում վճարում կատարելու նպատակով հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվելու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն վճարման հանձնարարագիրը և հանձնման-ընդունման արձանագրության պատճենը մուտքագրում է լիազորված մարմնի գանձապետական համակարգ, իսկ սահմանված կարգի համաձայն ներկայացված փաստաթղթերի հիման վրա լիազորված մարմինը տվյալ վճարումը կատարում է հանձնման-ընդունման արձանագրությունը գանձապետական համակարգ մուտքագրված լինելու

դեպքում՝ սույն պայմանագրի վճարման ժամանակացույցով սահմանված ժամկետներում, հինգ աշխատանքային օրվա ընթացքում:

5.4 Պայմանագրի շրջանակում կատարողական ակտերի դիմաց վճարումներն իրականացվում են հետևյալ բանաձևով՝ ՎԳ=ՄԳ/ՆԳxԿԾ, որտեղ՝

ՄԳ-ն պայմանագրի 5.1 կետում նշված գինն է (եթե ներառված են մեկից ավել չափաբաժիններ, ապա տվյալ չափաբաժնի գինն է).

ՆԳ-ն հրավերով հրապարակված շինարարական աշխատանքների նախահաշվային գինն է.

ԿԾ-ն տվյալ կատարողական ակտով ներկայացված աշխատանքների ծավալն է գումարային արտահայտությամբ.

ՎԳ –ն ծավալաթերթ-նախահաշվով սահմանված աշխատանքների դիմաց վճարվող գումարն է:

## 6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Կապալառուն պատասխանատվություն է կրում Աշխատանքի որակի և սույն պայմանագրի 1.3 կետով (ներառյալ օրացուցային գրաֆիկը) նախատեսված ժամկետի պահպանման համար:

6.2 Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքի կատարման ժամկետը խախտելու դեպքում Կապալառուից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ կատարման ենթակա, սակայն չկատարված Աշխատանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.3 Պայմանագրի 3.1.3 կետով նախատեսված հիմքերով Պատվիրատուի կողմից աշխատանքը չընդունվելու, ինչպես նաև 3.1.4 կետով նախատեսված կարգով պայմանագիրը լուծելու դեպքում Կապալառուից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 5.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով: Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև աշխատանքի արդյունքը սույն պայմանագրով սահմանված ժամկետում կատարելու, սակայն պատվիրատուի կողմից չընդունվելու դեպքում:

6.4 Պայմանագրի 6.2, 6.3 և 6.5.1 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Կապալառուին վճարվող գումարների հետ:

6.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 5.3 կետով նախատեսված ժամկետների խախտման համար Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.5.1 * Յուրաքանչյուր կատարողական ակտի հետ ներկայացնել կատարված աշխատանքների ծավալները հիմնավորող կատարողական գծագրերը, ինչպես նաև նախագծանախահաշվային փաստաթղթերով նախատեսված անհրաժեշտ լաբորատոր փորձարկումների վերաբերյալ կազմված եզրակացությունները, ընդ որում պատվիրատուի ներկայացուցչին նախապես տեղեկացնել նմուշառում իրականացնելուց վերաբերյալ: Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ողջ ընթացքում քաղաքաշինական նորմատիվատեխնիկական և հաստատված նախագծանախահաշվային փաստաթղթերով սահմանված պահանջների, այդ թվում շինարարական հրապարակի պատշաճ կազմակերպման, կահավորման, տեխնիկական անվտանգության, սանիտարահիգիենիկ և բնապահպանական (այդ թվում կլիմայի փոփոխության հետ հարմարվողականության միջոցառումների) նորմերի չպահպանման յուրաքանչյուր արձանագրված դեպքի համար Կապալառուի նկատմամբ կիրառվում է պատասխանատվության հետևյալ միջոցները.

| N | Խախտումը | Պատասխանատվությունը * | Խախտումը վերացնելու համար տրամադրվող ժամկետները | Խախտումը կրկնվելու դեպքում տրամադրվող ժամկետները |
|---|---|---|---|---|
| 1 | Կապալառուն չունի շինարարական թափոնների տեղակայման վայրի համար թույլտվություն | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով | 3 օր | Չի տրամադրվում |
| 2 | Շինարարական հրապարակից և/կամ տեղամասից հեռացված չեն աղբը, կենցաղային թափոնները և օտար առարկաները (աշխատանքների իրականացման ժամանակահատվածում, ինչպես նաև մինչև շինարարական օբյեկտը սահմանված կարգով շահագործման հանձնելը) | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով | 1 օր | 1) Շին. աղբի մասով – Չի տրամադրվում<br>2) Կենցաղային թափոնների և օտար առարկաների մասով – 1 օր |
| 3 | Ծառաթփային բուսականությունը հատված է (հատումը իրականացվում է միայն նախագծային փաստաթղթերով նախատեսված և/կամ | Գանձվում է տուգանք՝ պայմանագրով | Չի տրամադրվում | Չի տրամադրվում |

| | | | | |
|---|---|---|---|---|
| | համապատասխան լիազոր մարմնի կողմից տրված թույլատվության դեպքերում) | սահմանված ընդհանուր գնի 0,5 տոկոսի չափով | | |

Սույն աղյուսակում նշված պատասխանատվության միջոցները Կապալառուի նկատմամբ կարող են կիրառվել արձանագրված խախտման վերացման համար պայմանագրով նախատեսված աշխատանքների նկատմամբ տեխնիկական հսկողություն իրականացնողի կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կամ պատվիրատուի կողմից տրված ժամկետում խախտումը չվերացնելու դեպքում՝ տեխնիկական հսկողություն իրականացնող կազմակերպության կամ ՀՀ քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի կողմից Պատվիրատուին ներկայացված գրավոր հավաստման հիման վրա կամ պատվիրատուի նախաձեռնությամբ:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:
6.7 Տույժերի և (կամ) տուգանքների վճարումը կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները կատարելուց:

## 7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

## 8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:
8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:
8.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կապալառուն ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կապալառուի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:
8.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:
8.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

8.8 Աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կապալառուի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել աշխատանքի օգտագործման պահանջը, իսկ Կապալառուի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան

պայմանագրով ի սկզբանե աշխատանքների կատարման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 7 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում աշխատանքի կատարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.9 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կապալառու կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կապալառուի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կապալառուն:

8.10 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով աշխատանքի կատարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.11 Կապալառուի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կապալառուն, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից: Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկում է նաև Կապալառուի էլեկտրոնային փոստին:

8.12 Կապալառուն իրավունք ունի պայմանագրի կնքումից հետո Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 48-րդ գլխով սահմանված դեպքերում և կարգով կատարել գնման պայմանագրից ծագող դրամական պահանջի զիջում՝ պահանջի զիջման դիմաց ֆինանսավորման (ֆակտորինգի) պայմանագրի (այսուհետ՝ ֆակտորինգի պայմանագիր) հիման վրա: Ֆակտորինգի պայմանագիրը պետք է սահմանի, որ ֆինանսական գործակալը համաձայն է, որ պայմանագրով նախատեսված հիմքերի առկայության դեպքում Պատվիրատուն վճարումներն իրականացնելիս ապահովի Կապալառուի նկատմամբ տույժերի ու տուգանքների հաշվարկումը և հաշվանցումը վճարվելիք գումարների հետ՝ անկախ պահանջը զիջված լինելու հանգամանքից: Ընդ որում, ֆակտորինգի պայմանագրի հիման վրա պահանջի զիջման մասին գրավոր ծանուցումը (հավելված N 5) ստանալու դեպքում Պատվիրատուն պայմանագրով սահմանված վճարումը կատարում է ֆինանսական գործակալին, եթե ծանուցումը ստացվել է Պատվիրատուի կողմից վճարման հանձնարարագիրը և արձանագրության պատճենը լիազորված մարմնի գանձապետական համակարգ մուտքագրելու օրվան նախորդող օրը:

8.13 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.14 Սույն պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3, N 4 ,N 4.1 և N 5 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.15 Սույն պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8.16 Պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարումն իրականացվում է այդ նպատակով ֆինանսական միջոցների առկայության և դրա հիման վրա կողմերի միջև համապատասխան համաձայնագրի կնքման միջոցով: Պայմանագիրը լուծվում է, եթե այն կնքելու օրվան հաջորդող վեց ամսվա ընթացքում այդ նպատակով պայմանագրի կատարման համար ֆինանսական միջոցներ չեն նախատեսվում: Ընդ որում յուրաքանչյուր հաջորդ համաձայնագիրը կնքելու համար ֆինանսական միջոցների նախատեսման համար սույն կետով տրված վեցամսյա ժամանակահատվածի հաշվարկը սկսվում նախորդ համաձայնագրով սահմանված աշխատանքի կատարման արդյունքը ողջ ծավալով պատվիրատուի կողմից ընդունվելու օրվանից: Եթե պայմանագրի կատարման համար հատկացված ֆինանսական միջոցների չափը գերազանցում է գնումների բազային միավորի քանիհինգապատիկը, ապա Պատվիրատուի կողմից համաձայնագիր կկնքվի, եթե Կապալառուի կողմից տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումները փոխարինվում են երաշխիքով կամ կանխիկ փողով՝ հաշվի առնելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշման N 1 հավելվածի 32-րդ կետի 1-ին ենթակետի «գ» և 17-րդ ենթակետի «բ» պարբերությունների պահանջները: Ընդ

որում, Կապալառուն համաձայնագիրը կնքում, իսկ տուժանքի ձևով ներկայացված որակավորման և պայմանագրի ապահովումների փոխարինման դեպքում նաև նոր ապահովումները Պատվիրատուին ներկայացնում է համաձայնագիր կնքելու ծանուցումը ստանալու օրվանից 10 աշխատանքային օրվա ընթացքում: Հակառակ դեպքում պայմանագիրը Պատվիրատուի կողմից միակողմանիորեն լուծվում է:

## 9. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՊԱԼԱՌՈՒ |
| --- | --- |
| **Աբովյանի համայնքապետարան** | **«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ** |
| ք. Աբովյան, Բարեկամության hր. 1 | ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 112 |
| ՀՎՀՀ՝ 03561498 | ՀՎՀՀ՝ 00456403 |
| բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ | «Արմսվիսբանկ» ՓԲԸ |
| Հ/Հ 900102405058 | Հ/Հ 2500010665890100 |
| --------------------------------- | --------------------------------- |
| /ստորագրություն/ | /ստորագրություն/ |
| Է. Բաբայան | Ա. Ասրյան |
| Կ.Տ | Կ.Տ |

*Հավելված թիվ 1*
*« 02 » դեկտեմբերի 2025թ. կնքված*
*«ԱՐՀ-ԲՄԱՇՁԲ-25/134» ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՎԱԼԱԹԵՐԹ-ՆԱԽԱՀԱՇԻՎ*

## ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱԲՈՎՅԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱԲՈՎՅԱՆ ՔԱՂԱՔԻ ՍԱՐԱԼԱՆՋԻ, ԵՐԻՏԱՍԱՐԴԱԿԱՆ, ՇԻՆԱՐԱՐՆԵՐԻ, ՊԻՈՆԵՐԱԿԱՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԿԱՌՈՒՅՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ

Կցվում է

| NN | Աշխատանքների անվանումը | չ/մ | ծավալը | Միավորի արժեքը | Ընդամենը /հազ դրամ/ |
|---|---|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 |
| | **Արտաքին լուսավորություն** | | | | |
| 1 | Հենասյուն կոնաձև ցինկապատ, 10մ բարձրության կցաշուրթային (фланцевая) НФГ-10.0-02-ц, | հատ | 98,000 | 178,541 | 17497,02 |
| 2 | Բարձակ միաճյուղ ցինկապատ К1-0,5-0,5-ф2-ц | հատ | 98 | 35,701 | 3498,70 |
| 3 | Արտաքին լուսավորության լուսատու լուսադիոդային, 110Վտ(17024 լյում,154.8լյում/1Վտ,CCT-3000K,CRI-70) – Vizulo-Stork Little Brother /կամ համարժեք/ | հատ | 105,000 | 172,962 | 18161,01 |
| 4 | արտաքին լուսավորության ցանցերի համար սեղմակների հավակածու SV15 3xKE10.1+1KE10.3(AL10-35/CU1.5-25) | կ-տ | 110,00 | 8,916 | 980,76 |
| 5 | Արտաքին լուսավորության ղեկավարման արկղ 40Ա մուտքային ավտոմատ անջատիչով,32Ա կոնտակտորով,ժամանակի ռելեյով և հերմետիկ ֆոտոտվիչով մթնաշաղային ռելեյով-ЯОУ9602 | կ-տ | 4,00 | 41,253 | 165,01 |
| 6 | մալուխ պղնձե ВВГ- 3x1,5մմ2 | մ | 1200,0 | 0,620 | 744,00 |
| 7 | մալուխ պղնձե ВВГ- 1x4մմ2 | մ | 1100,0 | 0,545 | 599,50 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 8 | մալուխ պղնձե ВВГ- 4x6մմ2 | մ | 3500,0 | 2,170 | 7595,00 |
| 9 | Հաղորդալար ինքնակրող СИП-4 (5x10) | կմ 3լար | 0,183 | 145,841 | 26,74 |
| 10 | Հաղորդալար ինքնակրող СИП-4 (5x10)արժեքը | մ | 550,00 | 0,338 | 185,90 |
| 11 | Երկպատ ճկախողովակ 75/62.5 | մ | 500,0 | 1,448 | 724,00 |
| 12 | Երկպատ ճկախողովակ D110/92.3մմ | մ | 9300,0 | 2,343 | 21789,90 |
| 13 | Խողովակ կոշտ պոլիէթիլենային SDR17-160x9.5մմ | գմ | 700,000 | 5,810 | 4067,00 |
| 14 | Պոլիմեր դիտահոր Ф800/900(h) մտոցով և կափարիչով | հատ | 102,00 | 69,445 | 7083,39 |
| 15 | Պոլիմեր դիտահոր Ф800/1100(h) մտոցով և կափարիչով | հատ | 48,00 | 76,894 | 3690,91 |
| 16 | Ф75 հերմետիկ ներանցման ադապտեր | հատ | 200,000 | 3,331 | 666,20 |
| 17 | Ф110 հերմետիկ ներանցման ադապտեր | հատ | 400,000 | 6,435 | 2574,00 |
| 18 | Ե/բ հիմքերի պատրաստում B20դասի բետոնից, | $մ^3$ | 75,460 | 69,474 | 5242,51 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 19 | Խճի նախապատրաստական շերտ | մ³ | 6,272 | 9,410 | 59,02 |
| 20 | D8 բազալտե կոմպոզիտային ամրան | մ | 5096,00 | 0,253 | 1289,29 |
| 21 | մետաղյա իրեր- | կգ | 1666,00 | 0,596 | 992,94 |
| 22 | բիտումային էմուլսիա | կգ | 1813,00 | 0,246 | 446,00 |
| 23 | Բետոնե նախապատրաստում B7.5 պոլիմեր դիտահորների տակ | մ³ | 15,000 | 40,229 | 603,44 |
| 24 | 3-րդ կարգի գրունտի քանդում փոսորակում | մ³ | 198,00 | 6,578 | 1302,44 |
| 25 | Ավելորդ գրունտի բարձում էքսկավատորով ա/ինքնաթափեր | մ³ | 161,000 | 0,870 | 140,07 |
| 26 | Փոսորակի հետլիցք | մ³ | 37,00 | 1,476 | 54,61 |
| 27 | 3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով կողլիցք խրամուղում | մ³ | 462,000 | 0,714 | 329,87 |
| 28 | 3-րդ կարգի բնահողի մշակում էքսկավատրով, բարձելով ա/ինքնաթափերի վրա խրամուղում | մ³ | 429,000 | 0,870 | 373,23 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 29 | Խրամուղու հետլիցք մեխանիզմով | $մ^3$ | 462,00 | 0,068 | 31,42 |
| 30 | Ավելորդ գրունտի տեղափոխում 7կմ /161+429=590մ3/ | տն | 1062,00 | 2,387 | 2534,99 |
| 31 | Հետլիցք ավազով մեխանիզմով | $մ^3$ | 335,00 | 6,623 | 2218,71 |
| 32 | Անկյունակ 50x50x5 մմ L=2մ | հատ | 98,00 | 5,180 | 507,64 |
| 33 | Տուփ հերմետիկ (IP67) 240x195x90 մմ | հատ | 4,00 | 5,959 | 23,84 |
| | **Ապամոնտաժային աշխատանքներ** | | | | |
| 1 | Արտաքին լուսավորության լուսատու LED100W հանձնում պատվիրատուին | հատ | 95,00 | 2,503 | 237,79 |
| 2 | Արտաքին լուսավորության հենասյուն D133/4.5,L=8մ հանձնում պատվիրատուին | հատ | 95,00 | 15,461 | 1468,80 |
| 3 | Օդամալուխային գիծ АВВГ4x6,2800մ | կմ 3լար | 0,933 | 87,505 | 81,67 |
| 4 | Արտաքին լուսավորության ղեկավարման պահարան հանձնում պատվիրատուին | հատ | 4,00 | 35,393 | 141,57 |
| | **Ընդամենը** | **88,9** | **%** | | **108128,86** |
| | **Հեռահաղորդակցության (internet) օդային մալուխների տեղափոխում** | | | | |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 1 | Օդային մալուխի ապամոնտաժում /9000մ/ | կմ 3լար | 3,000 | 86,397 | 259,19 |
| 2 | 24 թելիկով օպտիկական մալուխի անցկացում D110(75) խողովակով | մ | 9000,0 | 0,940 | 8460,00 |
| 3 | Օպտիկական միացնող ագույց հերմետիկ | հատ | 20 | 82,830 | 1656,60 |
| 4 | Ագույցների կոմպլեկտ դիտահորի մեջ (մարմին+օրգանայզեր) | հատ | 5,000 | 22,713 | 113,57 |
| 5 | Կրոս թելիկային (բոքս/պանել) | հատ | 4,00 | 6,814 | 27,26 |
| 6 | Տուփ անցումային/ներանցում | հատ | 10,00 | 14,897 | 148,97 |
| | **Ընդամենը** | **8,8** | % | | **10665,58** |
| | **Էլեկտրամատակարարման մալուխների վերատեղադրում** | | | | |
| 1 | СИП-2 -3x35+1x54.6 հաղորդալարի ապամոնտաժում և վերատեղադրում /1000մ/ | կմ 3լար | 0,333 | 233,344 | 77,78 |
| 2 | СИП-2 -5x50+1x54.6 հաղորդալարի ապամոնտաժում և վերատեղադրում /300մ/ | կմ 3լար | 0,100 | 233,346 | 23,33 |
| 3 | СИП-2 -3x70+1x570 հաղորդալարի ապամոնտաժում և վերատեղադրում /200մ/ | կմ 3լար | 0,067 | 233,346 | 15,56 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| 4 | СИП-4 -3x10 հաղորդալարի ապամոնտաժում և վերատեղադրում /500մ/ | կմ 3լար | 0,167 | 233,346 | 38,89 |
| 5 | СИП-4 -3x16 հաղորդալարի ապամոնտաժում և վերատեղադրում /500մ/ | կմ 3լար | 0,167 | 233,346 | 38,89 |
| 6 | СИП հաղորդալարի կախման և ճյուղավորման պարագաներ | հատ | 100 | 1,490 | 149,00 |
| 7 | 4(6)(10) հաշվիչներով բաժանորդային արկղի ապամոնտաժում և նոր մոնտաժում | հատ | 15,000 | 6,844 | 102,66 |
| 8 | Խողովակականգնակ D133/4.5, L=7.5մ.10հատ | գմ | 75,000 | 8,427 | 632,03 |
| 9 | D133/4.5, L=7.5մ խողովակականգնակի ներկում 2 շերտ նիտրոէմալով | $մ^2$ | 31,00 | 1,739 | 53,91 |
| 10 | Ե/բ հիմքերի պատրաստում B20դասի բետոնից, | $մ^3$ | 4,000 | 69,474 | 277,90 |
| 11 | ամրան Φ8Ac1 | կգ | 70,00 | 0,410 | 28,70 |
| 12 | 3-րդ կարգի գրունտի քանդում փոսորակում | $մ^3$ | 8,00 | 6,578 | 52,62 |
| 13 | Ավելորդ գրունտի բարձում ձեռքով ա/ինքնաթափեր /4մ3/ | տն | 7,20 | 0,481 | 3,46 |
| 14 | Ավելորդ գրունտի տեղափոխում 7կմ | տն | 7,20 | 2,387 | 17,19 |

| | | | | | |
|---|---|---|---|---|---|
| | | | | | |
| 15 | Հետլիցք ձեռքով տոփանումով | մ³ | 4,00 | 1,476 | 5,90 |
| | **Ընդամենը** | **1,2** | **%** | | **1517,82** |
| | **Ընդամենը շին.մոնտաժային աշխատանքներ /առանց սարքավորումների արժեքի/** | **99,0** | **%** | | **120312,26** |
| | **Սարքավորումներ** | | | | |
| 1 | Ագույցների կոմպլեկտ դիտահորի մեջ (մարմին+օրգանայզեր) | հատ | 5,000 | 205,161 | 1025,81 |
| 2 | Կրոս թելիկային (բոքս/պանել) | հատ | 4,00 | 61,549 | 246,20 |
| | **Ընդամենը սարքավորումներ** | **1,0** | **%** | | **1 272,00** |
| | **Ընդամենը շին.մոնտաժային աշխատանքներ,սարքավորումներ** | **100** | **%** | | **121 584,27** |
| | **ԱԱՀ** | **20%** | | | **24 316,85** |
| | **Ընդամենը** | | | | **145 901,118** |

*Ըստ Քաղաքաշինության բնագավառում շինարարության իրականացում (բացառությամբ շինարարության թույլտվություն չպահանջվող աշխապանքների) հետևյալ ոլորտի՝*

**Շինարարական աշխատանքները իրականացնելու ողջ ընթացքում կապալառու կազմակերպությունը պետք է ունենա «Քաղաքաշինության բնագավառում լիցենզավորման ու որակավորման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության 30.11.2023թ. թիվ 2106-Ն որոշման թիվ 1 հավելվածով սահմանված փաստաթղթերի փաթեթ՝ համաձայն հետևյալ աղյուսակի:**

| | |
|---|---|
| Լիցենզավորման ենթակա գործունեության տեսակը | շինարարության իրականացում |
| Լիցենզիայի դաս և հավաստագրի կարգ | 1-ին կամ 2-րդ |
| Լիցենզիայի ծածկագիրը | 03 |
| Լիցենզիայի անբաժանելի մաս կազմող ներդիրի տեսակ | Էլեկտրամատակարարում (էլեկտրամատակարարման, |

| | |
|---|---|
| | էլեկտրալուսավորման ներքին և արտաքին ցանցեր, էլեկտրամատակարարման համակարգեր, ֆոտովոլտային և հողմաէներգետիկ կայաններ) |
| Ներդիրի համար | 05 |

* Կապալառուն աշխատանքները կատարում է ծավալաթերթում նշված հասցեում:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Աբովյանի համայնքապետարան**
ք. Աբովյան, Բարեկամության հր. 1
ՀՎՀՀ՝ 03561498
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ 900102405058

---------------------------------
/ստորագրություն/
Է. Բաբայան
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ**
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 112
ՀՎՀՀ՝ 00456403
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010665890100

---------------------------------
/ստորագրություն/
Ա. Առոյան
Կ.Տ

*Հավելված 1.1*

*« 02 » դեկտեմբերի 2025թ. կնքված*
*«ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-25/134» ծածկագրով պայմանագրի*

**ՀԱՎԱՍՏՈՒՄ**
**հրավերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութերի և (կամ) սարքերի ու սարքավորումների տեղադրման պարտավորության մասին**

«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ-ն հավաստում է, որ «ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-25/134»* ծածկագրով բաց մրցույթի շրջանակում ընտրված մասնակից ճանաչվելու դեպքում, պարտավորվում է նույն ծածկագրով մրցույթի շրջանակում կնքվող պայմանագրով նախատեսված աշխատանքների կատարման ընթացքում տեղադրել (օգտագործել) պայմանագրին կից ներկայացված նախագծային փաստաթղթերով սահմանված տեխնիկական բնութագրերին և երաշխիքային սպասարկման պայմաններին համապատասխանող նյութեր և (կամ) սարքեր ու սարքավորումներ՝ մինչև տեղադրումը (օգտագործումը) դրանց տեխնիկական բնութագրերը, ապրանքային նշանները, ֆիրմային անվանումները, մակնիշները և երաշխիքային ժամկետները նախապես գրավոր համաձայնեցնելով պատվիրատուի հետ:

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

**Աբովյանի համայնքապետարան**
ք. Աբովյան, Բարեկամության հր. 1
ՀՎՀՀ՝ 03561498
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ 900102405058

------------------------------
/ստորագրություն/
Է. Բաբայան
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ**
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 112
ՀՎՀՀ՝ 00456403
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010665890100

------------------------------
/ստորագրություն/
Ա. Ասրյան
Կ.Տ

*Հավելված թիվ 2*
*« 02 » դեկտեմբերի 2025թ. կնքված*
*«ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-25/134» ծածկագրով պայմանագրի*

**ՕՐԱՑՈՒՅՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ***

*Աբովյան համայնքի կարիքների համար Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Սարալանջի, Երիփասարդական, Շինարարների, Պիոներական փողոցների լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ*

| N ը/կ | Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումներ | Աշխատանքների կատարման ժամկետը** | |
|---|---|---|---|
| | | Սկիզբը | Ավարտը |
| 1 | *Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Սարալանջի, Երիփասարդական, Շինարարների, Պիոներական փողոցների լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ* | *Պայմանագրի (համաձայնագրի) կնքման օրվանից* | *Պայմանագիրն (համաձայնագիրն) ուժի մեջ մտնելու օրվանից 90-րդ օրացուցային օրը ներառյալ* |
| **ԸՆԴԱՄԵՆԸ** | | *Պայմանագրի (համաձայնագրի) կնքման օրվանից* | *Պատվիրատուի կողմից գրավոր ծանուցելու օրվանից 90-րդ օրացուցային օրը ներառյալ* |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Աբովյանի համայնքապետարան
ք. Աբովյան, Բարեկամության հր. 1
ՀՎՀՀ՝ 03561498
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ 900102405058

---------------------------------
/ստորագրություն/
Է. Բաբայան
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ**
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 112
ՀՎՀՀ՝ 00456403
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010665890100

---------------------------------
/ստորագրություն/
Ա. Մարյան
Կ.Տ

*Հավելված N 3*
*« 02 » դեկտեմբերի 2025թ. կնքված*
*«ԱԲՀ-ԲՄԱՇՁԲ-25/134» ծածկագրով պայմանագրի*

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Աշխատանքի | | | | | | | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | դիմաց վճարումները նախատեսվում է իրականացնել 20 թ.-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | | | | | | | |
| | | | հունվար | փետրվար | մարտ | ապրիլ | մայիս | հունիս | հուլիս | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը |
| *1* | *45311138* | *Աբովյան համայնքի Աբովյան քաղաքի Սարալանջի, Երիտասարդական, Շինարարների, Պիոներական փողոցների լուսավորության համակարգի կառուցման աշխատանքներ* | *%* | *%* | *%* | *%* | *%* | *%* | *%* | *%* | *%* | *%* | *%* | *%* | *%* |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Աբովյանի համայնքապետարան
ք. Աբովյան, Բարեկամության hր. 1
ՀՎՀՀ՝ 03561498
բանկը՝ ՀՀ Ֆին. նախարար. ԿԳ
Հ/Հ 900102405058

/ստորագրություն/
Է. Բաբայան
Կ.Տ

**ԿԱՊԱԼԱՌՈՒ**

**«Ռաֆ-Օջախ» ՍՊԸ**
ՀՀ, ք. Երևան, Վարդանանց 112
ՀՎՀՀ՝ 00456403
«Արմսվիսբանկ» ՓԲԸ
Հ/Հ 2500010665890100

/ստորագրություն/
Ա. Ասրյան
Կ.Տ

*Հավելված թիվ 4*
*«      »          20   թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

Պայմանագրի կողմ
_______________________
_______________________
գտնվելու վայրը ___________
հհ ___________________
հվհհ __________________

Պատվիրատու
_______________________
_______________________
գտնվելու վայրը ___________
հհ___________________
հվհհ__________________

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N**
**ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՄ ԴՐԱ ՄԻ ՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

*«     է «          է 20    թ.*

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

______________________________________________________________

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ «____է «_______________է 20 թ.
Պայմանագրի համարը՝   _________
Պատվիրատուն և Պայմանագրի կողմը՝ հիմք ընդունելով պայմանագրի կատարման վերաբերյալ « է « է 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը կատարել է հետևյալ աշխատանքները՝

| N | Կատարված աշխատանքների | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | քանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | | |
| | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրության երկկողմ հաստատման համար հիմք հանդիսացած հաշիվ ապրանքագիրը և դրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Աշխատանքը հանձնեց
_______________________
ստորագրություն
_______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Աշխատանքը ընդունեց
_______________________
ստորագրություն
_______________________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 4.1*
*«      »      20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ N
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ ______________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և ________________-ի
Պատվիրատուի անունը Կապալառուի անունը
(այսուհետ՝ Կապալառու) միջև 20  թ. ______________________-ին կնքված N __________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը
գնման պայմանագրի շրջանակներում Կապալառուն 20 թ. ________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված աշխատանքները.

| Աշխատանքի | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КОՂՄЕРԸ

**Հանձնեց**

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

**Ընդունեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

______________________
ազգանուն, անուն

______________________
ստորագրություն

*Հավելված N 5*
*«     »     20  թ. կնքված*
*ծածկագրով պայմանագրի*

# ԾԱՆՈՒՑՈՒՄ

________________________________________ հայտնում է, որ .
ֆինանսական գործակալի անվանումը

1. ________________-ի և ________________-ի միջև «--»     20 թ. կնքված
պատվիրատուի անվանումը     կապալառուի անվանումը

«---------/---------» ծածկագրով պայմանագրի (այսուհետ՝ Պայմանագիր) շրջանակում իր և ________________-ի միջև «--» 20 թ-ին կնքվել է «--------------------» ծածկագրով ֆակտորինգի
կապալառուի անվանումը
պայմանագիրը,

2. համաձայն է Պայմանագրի 8.12 կետով սահմանված պահանջներին:

________________________________________     ________________
ֆինանսական գործակալի անվանումը (ղեկավարի պաշտոնը, անուն ազգանունը)

ստորագրությունը

Կ. Տ. (առկայության դեպքում)

«--»     20 թ.